

ՍԱՆՄԱՐԱՆԸ
ԱՆՉՆԱԿԱՆ ԵՒ ՀԱՍԱՐԱԿԱՑ
ԱՂՕԹՔԻ ՀԱՄԱՐ

ՄԱՍԿ Ե. - Սաղմուն 90-109



Թարգմանեց ու խմբագրեց՝
ՄԱՇՏՈՑ ՎԱՀԷ ՂԱԶԱՐԵԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Սիրելի Ընթերցող,

օգտագործելով հաղորդակցութեան ներկայ միջոցները, անձնական նախաձեռնութեամբ՝ փորձում եմ իմ համեստ նպաստս բերել մեր ազգային հոգեւոր կեանքին, նաեւ համացանցի միջոցով տարածելով քրիստոնէական փոքրիկ գրութիւններ, այսպիսով յաղթահարելով աշխարհագրական սահմանափակումներն ու առաքումի ժամանակները: Փափաքս է հաղորդել քեզ այն՝ ինչ ինձ հաղորդուեց Նախախնամութեան գծած զանազան ճանապարհներով:

Կարող ես քո մասնակցութիւնը բերել Աստուծոյ Խօսքին մատուցուած այս ծառայութեանը, հաղորդելով քո մերձաւոր ու հեռաւոր ծանօթներին ահա այս համացանցային հասցէն.

gradaran@mashtoz.org

Այս հասցէին գրելով, նրանց հասցէները նոյնպէս կ'անցնեն իմ անուանացանկի մէջ եւ յաջորդաբար նրանք նոյնպէս կը ստանան հոգեւոր նոր գրութիւնների հրատարակումը տեղեկացնող նամակները: Այս ծառայութիւնն անվճար է:

Այս գործին որեւէ առաջարկ կամ օգնութիւն հասցնելու, որեւէ տեղեկութիւն խնդրելու կամ հարցումներ ներկայացնելու համար կարող ես գործածել համացանցային վերոնշեալ հասցէն:

*Կանխայայտ շնորհակալութեամբ եւ լաւագոյն մաղթանքներով,
եղբայրդ ի Քրիստոս Յիսուս՝*

Մաշտոց Վահէ Ղապարեան

ՍԱՂՄՈՍԱՐԱՆԸ
ԱՆՁՆԱԿԱՆ ԵՒ ՀԱՍԱՐԱԿԱՅ
ԱՂՕԹՔԻ ՀԱՄԱՐ

ՍԱՂՄՈՍ 90 [89]

Սովորեցրու մեզ հաշուել մեր օրերը

- Կցորդ. Խոփը շորանում է, ժողովները՝ թափում,
Բայց Տիրոջ խօսվելյա-խոսան է մնում (Հմմտ. 1 Պա 1, 24-25):
- Կամ. Եթե ապրում ենք, ապրում ենք Տիրոջ Համար.
Եթե մեռնում ենք, մեռնում ենք Տիրոջ Համար (Հում 14, 8):
- Կամ. Աստուծո՛ւ Հեռո՛ւ չէ մեզնից իրազեան չե՛րից. Նրանում ենք ապրում,
Նրանում ենք շարժում, Նրանում գոյութիւն ունենք (Հմմտ. Գրծ 17, 27-28):

¹ Աղօթք: Մովսէսի՝ Աստուծոյ մարդու:

Տէր, սերնդից սերունդ
ապաստան եղար մեր համար.

² Լեռների ծագումից,
երկրի ու աշխարհի ստեղծումից առաջ արդէն,
Դու կաս յաւիտենից եւ յաւիտեան, Աստուած:

³ Դու մարդուն վերադարձնում ես հողի փոշուն,
երբ ասում ես. «Աղամի որդիներ, վերադարձէք».

⁴ Քո աչքին՝ հազար տարիները երեկոյայ պէս են,
մէկ օրոյայ պէս, որ անցնում է, գիշերոյայ մէկ ժամոյայ նման:

⁵ Նրանց անէացնում ես՝ ինչպէս երազն առաւօտեան,
նման են խոտին, որ ծլում է.

⁶ առաւօտեան ծլարձակում է ու ծաղկում,
երեկոյեան հնձում է ու չորանում:

⁷ Մենք սպառում ենք Քո բարկութիւնից,
ցասումը սարսափեցնում է մեզ.

⁸ մեր յանցանքները դնում ես Քո առաջ,
մեր գաղտնի մեղքերը՝ երեսիդ լոյսի ներքոյ:

⁹ Ցասմանդ հետեւանքում՝ անէանում են մեր օրերը,
մեր տարիները վերանում են շնչի նման.

¹⁰ մեր կեանքը հասնում է եօթանասուն տարոյայ,
ութսունի, եթէ ուժերը բաւականացնում են.
մեծամասնութեամբ տանջանք են ու յոգնութիւն,
չուտով վերջանում են եւ մենք անհետանում ենք:

¹¹ Ո՞վ է ճանաչում ցասմանդ զօրութիւնը,
ո՞վ է զգացել բարկութեանդ ծանրութիւնը.

¹² սովորեցրու մեզ հաշուել մեր օրերը
եւ կը հասնենք սրտի իմաստութեանը:

¹³ Վերադարձիր, Տէր. մինչեւ ե՞րբ.
եւ մխիթարութիւն բեր Քո ծառաներին.

¹⁴ առաւօտեան յագեցրու մեզ Քո սիրով,
կը ցնծանք ու կ'ուրախանանք ամբողջ օրը:

¹⁵ Զուարթացրու մեզ այն օրերի փոխարէն,
որոնցում տրտմեցրիր մեզ,
այն տարիների փոխարէն, որոնցում տեսանք չարիքը.

¹⁶ յայտնիր ծառաներիդ Քո գործը,
փառքդ, Տէր, նրանց որդիների վրայ:

¹⁷ Թող մեր վրայ լինի մեր Աստծոյ քաղցրութիւնը,
հաստատիր մեր համար մեր ձեռքերի գործը,
մեր իւրաքանչիւր գործը հասցրու իր աւարտին:



ԱՊՂԱՌՈՒ 91 [90]

«Տրտմութեան մէջ ես նրա հետ եմ լինելու»

Կցորդ. Յիսուս խառասուն օր փորձուց սաբանայից,

մնում էր Գալիլայի Տեղ եւ Ըրեշտակները ծառայում էին իրեն (Հմմտ. Մրկ 1, 13):

Կամ. Ըստ ծառայարի մէջ եւ շի թոյլարի՝ որ փորձուց յետ ու ժերից վեր (1Կր 10, 13):

Կամ. Ըստ ծառայութեան Տեղ եւ Ըրեշտակները ծառայում էին իրեն (Հմմտ. 1Կր 10, 13):

Կամ. Չեղ շի խանութիւն եւ Գալիլայի ոտնակներն անելու օրերին ու կարծես ճանաչում

եւ թշնամու թողր զօրութեաններին (Հմմտ. Ղկս 10, 19):

Կամ. Հրեշտակներն առաւելում են ծառայելու նրանց՝

ով վեր ծառայութեւն են փրկութեանը (Հմմտ. Եբր 1, 14):

¹ Դու, որ բնակում ես Բարձրեալի մտերմութեամբ,
գիշերն անցկացնում ես Հզօրի հովանու ներքոյ.

² ասա Տիրոջը. «Ապաւէն իմ, ուժ իմ,
իմ Աստուած, որի մօտ ես ապահով եմ»:

³ Կը փրկի քեզ որսորդի ցանցից,
մահաբեր ծանր հիւանդութիւնից.

⁴ Իր թեւերով նա ծածկում է քեզ,
դու ապաստան ես գտնում իր փետուրների ներքոյ,
Նրա հաւատարմութիւնը զրահ է ու վահան:

⁵ Չես վախենայ գիշերուայ սարսափներից,
նետից, որ թռչում է ցերեկը.

⁶ Ժանտախտից, որ յառաջանում է խաւարի մէջ,
պատուհասից, որ հարուածում է կէսօրին:

⁷ Հազարներ կ'ընկնեն քո կողքին,
բիւրաւորներ կ'ընկնեն քո աջին,
բայց ոչինչ չի կարողանայ վնասել քեզ:

⁸ Բաւական է՝ որ բացես աչքերդ
եւ կը տեսնես չարագործների հատուցումը.

⁹ այո՛, Տէրը քո ապաւէնն է,
դու Բարձրեալի մէջ ես հաստատել քո բնակութիւնը:

¹⁰ Դժբախտութիւնը չի կարող ընկնել քո վրայ,
ո՛չ էլ չարիքը՝ մօտենալ քո վրանին.

¹¹ քո մասին հրամայել է Իր հրեշտակներին,
որպէսզի պահպանեն քո բոլոր ճանապարհները:

¹² Նրանք կրելու են քեզ իրենց ձեռքերի վրայ,
որպէսզի ոտքդ չխփես քարին.

¹³ կ'անցնես իժերի ու կարիճների վրայով,
ոտնակոխ կ'անես առիւծին եւ օձին:

¹⁴ «Ես փրկելու եմ նրան, որովհետեւ իր անձը վստահել է Ինձ,
Ես փառաւորելու եմ նրան, որովհետեւ ճանաչում է Իմ Անունը.

¹⁵ նա կանչելու է Ինձ եւ Ես պատասխանելու եմ նրան,
տրամուլթեան մէջ ես նրա հետ եմ լինելու:

Ազատելու եմ նրան եւ ծածկելու եմ փառքով,

¹⁶ կեանքի երկար օրերով յազեցնելու եմ նրան,
չնորհելու եմ նրան տեսնել Իմ պարգեւած փրկութիւնը»:



ԱՊՂԱՌՈՒ 92 [91]

Արդարն անելու է արմատենու նման

Կցորդ. Պարկանո՛ւմ եմք Սրան՝ ովյարո՛ւթիւն է աւել մեռելներից,
որպէսզի պարգեւերենք Աստուծոյ Համար (Հմմտ. Հում 7, 4):

Կամ. Ով մեռում է իմ մէջ, շար պարո՛ղ է բերում,
որովհետեւ առանց ինչ ոչինչ չէի կարողանել (Հմմտ. Յվհ 15, 5):

Կամ. Մեղճից ազատուած եւ Աստուծոյ շահաները դարձած,
դու՛ն էր պարո՛ղը Հաւատում էի սրբագործման Համար (Հում 6, 22):

Կամ. Սրացել ենք Աստուծոյ Հոգին, ճանաչելու՝ Համար՝
Ինչ որ է ան Աստուծոյ պարգեւել մեզ (Հմմտ. 1 Կր 2, 12):

¹ **Սաղմոս: Երգ: Հարաթ օրոյայ համար:**

² Բարի է երախտագիտութիւն յայտնել Տիրոջը,
օրհնութիւններ երգել Անուանդ, ո՛վ Բարձրեալ.

³ առաւօտեան աւետարանել Քո սէրը,
հաւատարմութիւնդ՝ գիշերուայ ընթացքում.

⁴ տասնալարեան սաղմոսարանով եւ քնարով,
մեղեդիներով եւ տաւղի երգերով:

⁵ Դու ինձ ուրախացնում ես, Տէր, Քո վարմունքով,
ես ցնծում եմ Քո ձեռքերի գործերով.

⁶ քանիցս մեծ են գործերդ, Տէր,
եւ քանիցս խորն են Քո մտքերը.

⁷ անգգամ մարդը չի կարող ճանաչել դրանք,
անմիտն անընդունակ է թափանցել դրանցից ներս:

⁸ Եթէ ամբարիշտները բուսնում են խոտի նման,
եթէ ծաղկում են չարիք գործողները.
դա մէկընդմիշտ հնձուելու համար է միայն,
⁹ բայց Դու, Տէր, յաւիտեան Բարձրեալն ես:

¹⁰ Քո թշնամիները. ահա նրանք, Տէր,
Քո թշնամիները. ահա մեռնելու են,
ցիրուցան են արուելու չարագործները:

¹¹ Գոմէչի նման աւելացնում ես իմ կորովը,
բուրումնաւէտ իւղեր ես ցանում իմ վրայ.

¹² աչքս բացայայտում է ինձ լրտեսողին,
ախանջներս ճանաչում են վրաս յարձակողին:

¹³ Արդարն աճելու է արմաւենու նման,
բարձրանալու է Լիբանանի մայրու նման.

¹⁴ Տիրող յարկերի ներքոյ տնկուած,
ծաղկելու է մեր Աստծոյ ներկայութեանը:

¹⁵ Ծերութեան օրերին դեռ պտուղ է տալու,
միշտ արգասաւոր ու կանաչ է մնալու.

¹⁶ աւետարանելու համար. «Տէրը հաւատարիմ է,
Նրանում, որ իմ վէմն է, չկայ անարդարութիւն»:



ԱՂՄՈՒ 93 [92]

Տէրը թագաւորում է

Կցորդ. Թող գայ Քո արժայոթիւնը,

Թող Քո կամէն լինի երկրի վրայ՝ ինչպէս երկնի՞ն՝ (Մտթ 6, 10):

Կամ. Ալեւտեալ: Տէրեց Իր Թագաւորութեանը.

Տէրը, մեր Աստուածը, Ամենակարողը (Յյտ 19, 6):

Կամ. Աստուծոյ արժայոթիւնը չէր մէջ է (Ղկս 17, 21):

¹ Տէրը թագաւորում է.

Նա գգեստաւորուել է մեծվայելչութեամբ,
Տէրը գօտեպնդուել է գօրութեամբ:

Աշխարհն հաստատուն է եւ չի սասանում,

² սկզբից ամրապինդ է Քո գահը.

այո՛, ի յաւիտենից Դու կաս:

³ Բարձրացնում են գետերը, Տէր,

բարձրացնում են գետերն իրենց ճայնը,

բարձրացնում են գետերն իրենց թնդիւնը:

⁴ Վիթխարի ջրերի ճայնից աւելի,
ծովի ալիքներից աւելի հզօր,
հզօր է Տէրը վերեւում:

⁵ Քո վկայութիւնները լիովին հաւատարիմ են,
Քո յարկի ներքոյ բնակւում է սրբութիւնը
օրերի տեւողութեամբ, Տէր:



ԱՊՂԱՌՈՒ 94 [93]

Երանի այն մարդուն, ում խրատում ես

Կցորդ. Ինչպէ՞ս առաքանում եմ մեզնե՞ս - Քրիստոսի շարժարանփները,
այնպէ՞ս ել՝ Քրիստոսի շնորհի - առաքանում եմ եր մեծ թարգմանիչները (Հմմտ. 2Կր 1, 5):

Կամ. Տէրը խրատում է նրան՝ ու՛մ սիրում է,
մարտահրճում է իրաւանշիւթին՝ ու՛մ ընդունում է որպէ՛ս որդի (Եբր 12, 6):

¹ Աստուած, որ արդարութիւն ես անում, Տէր,
Աստուած, որ արդարութիւն ես անում, յայտնուիր.

² ոտքի ել, ո՛վ երկրի դատաւոր,
եւ հպարտներին տուր հատուցումը:

³ Մինչեւ ե՞րբ ամբարիշտները, Տէր,
մինչեւ ե՞րբ են ամբարիշտները յաղթելու.

⁴ խօսում են, խօսում են գոռոզութեամբ,
պարծենում են իրենց գործած չարիքներով:

⁵ Ոտնակոխ են անում ժողովուրդդ, Տէր,
հարստահարում են ժառանգութիւնդ.

⁶ սպանում են այրիին ու պանդուխտին,
մահ են հայթայթում որբին.

⁷ ասում են. «Տէրը չի տեսնում,
Յակոբի Աստուածը չի զանազանում»:

⁸ Ուշադիր եղէք, դուք՝ բոլոր անմիտներդ,
յիմարներդ, ե՞րբ էք հասկանալու.

⁹ ով ստեղծում է ականջը, չի՞ լսում,
ով կաղապարում է աչքը, չի՞ տեսնում:

¹⁰ Ով պատժում է ժողովուրդներին, չի՞ կարող պատժել ձեզ,
Նա՛ որ սովորեցնում է մարդուն իմաստութիւնը.

¹¹ Տէրը ճանաչում է մարդու ծրագրերը,
որոնք ոչ այլ ինչ են, եթէ ոչ՝ ծուխ:



¹² Երանի՛ այն մարդուն, ում խրատում ես, Տէր,
ու՛մ Դու կրթում ես Քո օրէնքով.

¹³ որպէսզի չարութեան օրերում հանգիստ տաս նրան,
մինչեւ որ փոսը կը փորուի ամբարիշտի համար:

¹⁴ Տէրը չի մերժում Իր ժողովուրդին,
չի լքում Իր ժառանգութիւնը.

¹⁵ դատաստանը կրկին կատարուելու է արդարութեամբ,
նրան հետեւելու են բոլոր սրտով ուղիղները:

¹⁶ Ո՞վ իմ համար դուրս կը գայ չարագործների դէմ,
ո՞վ կը պաշտպանի ինձ ոճրագործներից.

¹⁷ եթէ Տէրը չլինէր իմ օգնութիւնը,
չատ շուտով կը բնակուէի լռութեան մէջ:

¹⁸ Երբ ասում եմ. «Ոտքերս սասանում են»,
Քո սէրը, Տէր, նեցուկ է կանգնում ինձ.

¹⁹ եթէ բազում արտմութիւններ խոստում են ներաշխարհիցս ներս,
Քո մխիթարութիւնը ուրախացնում է կեանքս:

²⁰ Մի՞թէ Դու մեղսակից ես այլասերուած իշխանութեանը,
որ բռնատիրութիւնը դարձնում է օրէնք.

²¹ որ հալածում է արդարի կեանքը,
որ մահուան է դատապարտում անմեղին:

²² Ո՛չ: Տէրն է իմ զօրութիւնը,
իմ Աստուածը իմ ապաստանի ժայռն է.

²³ նրանց դէմ է թափելու բռնութիւնը,
նրանց նենգութեան պատճառով՝ նրանց մատնելու է լռութեան,
լռութեան է մատնելու նրանց մեր Տէր Աստուածը:



ԱՊՂԱՌՈՒ 95 [94]

Լսեցէք այսօր Իր ձայնը

Կցորդ. Քանի որ ոմանի գետն պէտք է մորնէն այն Հանգստից ներս ,

Աստուած սահմանում է մի նոր օր . այսօրը (Հմմտ. Եբր 4, 6-7):

Կամ. Խրախոսեցէ՛վ միմեանց ամէն օր , իմնի գետն գետնում է այս այսօրը (Հմմտ. Եբր 3, 13):

Կամ. Երանի՛ նրանց՝ ովքեր լսում են Աստուծոյ խօսիչը եւ կարարում են այն (Ղկա 11, 28):

¹ Եկէք, ծափահարենք Տիրոջը,
աղաղակենք մեր փրկութեան վէմին.

² Երախտագիտութիւն յայտնելով՝ մերձենանք Նրան,
գովաբանութեան սաղմոսներով աղաղակենք դէպի Նա:

³ Այո՛, Տէրը մի մեծ Աստուած է,
մեծ թագաւոր բոլոր աստուածների վրայ.

⁴ Նրա ձեռքում են երկրի անդունդները,
Նրանն են լեռների կատարները.

⁵ Նրանն է ծովը, Նա է այն ստեղծել,
Նրանն է երկիրը, Նրա ձեռքերն են այն կաղապարել:

⁶ Եկէք, խոնարհուենք, երկրպագենք
ծունկի եկած, Տիրոջ առաջ՝ որ ստեղծել է մեզ.

⁷ այո՛, Նա է մեր Աստուածը
եւ մենք՝ Իր արօտի ժողովուրդը,
Իր ձեռքով առաջնորդուած հօտը:

Լսեցէք այսօր Իր ձայնը.

⁸ «Մի՛ կարծրացէք ձեր սիրտը ինչպէս Մերիբայում,
ինչպէս Մասսայի օրը, անապատում.

⁹ երբ ձեր հայրերը փորձեցին Ինձ,
փորձեցին Ինձ, տեսնելով հանդերձ Իմ գործը:

¹⁰ Այն սերունդը տհաճութիւն պատճառեց ինձ քառասուն տարի,
եւ ասացի. "Շեղուած սիրտ ունեցող ժողովուրդ եմ,
չեն կամենում ճանաչել Իմ ճանապարհները".

¹¹ Բարկութեանս մէջ, յայնժամ, երդուեցի,
թէ՛ հանգստիցս ներս նրանք չեն մտնի»:



ԱՂՂԱՌԱ 96 [95]

Տէրը գալիս է դատելու երկիրը

Կցորդ. Ինչ որո՛ւել է շնորհը՝

ժողովուրդներին աւերարանելու - Բրիսպոսի Հարսոս-թիւնները (Հմմտ. Եփս 3, 8):

կամ. Նրանք մի նոր երգ էին երգում Պառանգաճի առաջ (Հմմտ. Յյտ 14, 3):

կամ. Ինչ է որո՛ւել ամէն շխանոթիւն երկնիցում եւ երկրի վրայ: Գնացէ՛ք, որեմն,
եւ աշակերտ դարձրէ՛ք թողոր ժողովուրդներին (Հմմտ. Մտթ 28, 18-19):

կամ. Ասորոս ճահարկել է մի օր,
որո՛ւմ դարելու է աշխարհն արդարութեամբ (Հմմտ. Գրծ 17, 31):

¹ Երգեցէք Տիրոջը մի երգ նոր,
երգեցէք Տիրոջը, երկրներ բոլոր,

² երգեցէք Տիրոջը եւ օրհնեցէք Նրա Անունը:

Օր ըստ օրէ աւետարանեցէք Նրա պարգեւած փրկութիւնը,

³ հեթանոսների մէջ պատմեցէք Նրա փառքը,
բոլոր ժողովուրդների մէջ՝ Նրա սքանչելիքները:

⁴ Տէրը մեծ է եւ արժանի է ամէն տեսակ գովքի,
ահարկու է աստուածներից գերիվեր,

⁵ ոչնչութիւն են հեթանոսների աստուածները:

Տէրը սփռեց տարածեց երկինքը,

⁶ Նրա առջեւ պայծառութիւն եւ մեծվայելչութիւն,
Նրա Սրբավայրում՝ զօրութիւն եւ զեղեցկութիւն:

⁷ Մատուցէք Տիրոջը, ժողովուրդների ընտանիքներ,
մատուցէք Տիրոջը փառք եւ զօրութիւն,

⁸ մատուցէք Տիրոջը Իր Անուան փառքը:

Բերէք ընծաներ, մտէք Նրա օթեւանից ներս,
⁹ Երկրպագեցէք Տիրոջը Արբավայրի փառահեղութեան մէջ,
դողացէք Նրա առաջ, երկրներ բոլոր:

¹⁰ Ասացէք հեթանոսների մէջ. «Տէրը թագաւորում է».
աշխարհն հաստատուն է եւ չի սասանւում,
Նա ուղղութեամբ կառավարում է ժողովուրդներին:

¹¹ Ուրախութիւն երկնքում, թող ցնծայ երկիրը,
թող զուարճանայ ծովը եւ ինչ որ նրանում պարունակուած է,
¹² թող բերկրեն դաշտերը եւ իրենց լիութիւնը:

Անտառի ծառերը թող պարեն զուարթութեամբ,
¹³ երեսի առաջ Տիրոջ, որ գալիս է,
որ գալիս է դատելու երկիրը:

Դատելու է աշխարհն արդարութեամբ
եւ ժողովուրդներն իր ճշմարտութեամբ:



ԱՊՂԱՌԱ 97 [96]

Բարձրեալն ամբողջ երկրի վրայ

Կցորդ. Ես քոյ արձայո՞ւնիւնը արդարո՞ւնիւն է ու խաղաղո՞ւնիւն,
եւ ուրախո՞ւնիւն Սոբոբ չոգո՞ւմէջ (Հմմտ. Հում 14, 17):

Կամ. Ես աջնեկն աշխարհ մոցնելով, Ես քո աշ սսոմէ.

«Թող երկրպագեն նրան բոլոր Հրեշտակները» (Հմմտ. Եբր 1, 6):

Կամ. Ուրախացէ՛՛ Տիրոջ մէջ միշտ, կրկնումէ՛՛ ուրախ եղէ՛՛ (Փլպ 4, 4):

Կամ. Ինչպէ՞ս կայծակն է փայլում արեւելից արեւմուտք,
այնպէ՞ս է լինելու մարդո՞ւ Որդին Իր օրը (Ղկա 17, 24):

¹ Տէրը թագաւորում է, թող ցնծայ երկիրը,
թող ուրախ լինեն բազմաթիւ կղզիները.

² խաւար եւ ամպեր են Նրան շրջապատում,
Նրա գահի հիմքերն են իրաւունքն ու արդարութիւնը:

³ Կրակ է քայլում Նրա առջեւից
եւ չորսկողմը լափում է Նրա թշնամիներին.

⁴ Նրա փայլակները լուսաւորում են աշխարհը,
երկիրը տեսնում է եւ ցնցւում:

⁵ Լեռները մոմի նման հալւում են Տիրոջ առաջ,
ամբողջ երկրի Տիրոջ առաջ.

⁶ երկինքը հռչակում է Նրա արդարութիւնը,
բոլոր ժողովուրդները տեսնում են Նրա փառքը:



⁷ Թող ամօթահար լինեն կուռքեր պաշտողները,
որ պարծենում են իրենց ունայնութիւններով.
«Ո՛վ բոլոր աստուածներ, երկրպագեցէք Նրան»:

⁸ Միտնն ունկնդրում է եւ բերկրում,
ցնծում են Յուդայի քաղաքները,
Քո դատավճիռների համար, Տէր:

⁹ Որովհետեւ Դու ես, Տէր,
Բարձրեալն ամբողջ երկրի վրայ,
աւելի հզօր ես՝ քան բոլոր աստուածները:

¹⁰ Ատեցէք չարիքը, Տիրոջը սիրողներ.
Հաւատացեալների կեանքի պահապանը
նրանց խլում է ամբարիշտների ձեռքից:

¹¹ Լոյսը ծագելու է արդարի համար,
ուրախութիւնը՝ սրտով ուղիղներին:

¹² ուրախացէք, արդարներ, Տիրոջ մէջ,
երախտագիտութիւն մատուցէք՝ նրա Սրբավայրը յիշելիս:



ԱՊՂԱՌԱ 98 [97]

Երկիրը տեսաւ Աստուծոյ պարգեւած փրկութիւնը

Կցորդ. Ի՞նչ էրը քեզան փրկութիւնը,

որ Դու՝ պարբաստելէս թուր ժողովուրդներին առաջ (Հմմտ. Ղկս 2, 30-31):

Կամ. Ի՞նչ էր յիշուիլը եւ ի՞նչ էր յիշուիլը թուր խոնարհեցուցուիլը, ի՞նչ էր յիշուիլը մարմին
դաստիարակութիւնը եւ Աստուծոյ պարգեւած փրկութիւնը (Հմմտ. Ղկս 3, 5-6):

Կամ. Թող յիշուիլը լինի, որ Աստուծոյ պարգեւած այս փրկութիւնը
առաջնութեամբ հեռանալու էր (Գրծ 28, 28):

Կամ. Աշխարհի թագաւորութիւնը պարկասում է մեր Տիրոջը եւ Իր Քրիստոսին.
Մա թագաւորութիւնը եւ յաւիտեանս յաւիտեանց (Հմմտ. Յյտ 11, 15):

¹ Մաղմու:

Երգեցէք Տիրոջը մի նոր երգ,
որովհետեւ նա հրաշքներ գործեց.
Իր աջը եւ իր սուրբ բազուկը
տուեցին իրեն յաղթանակը:

² Տէրը ճանաչել տուեց իր պարգեւած փրկութիւնը,
ժողովուրդներին յայտնեց իր արդարութիւնը.

³ յիշեց իր հաւատարմութիւնը,
Իսրայէլի ժողովուրդի հանդէպ իր սէրը.
Եւ երկրի բոլոր սահմանները
տեսան Աստուծոյ պարգեւած փրկութիւնը:

⁴ Աղաղակեցէք դէպի Տէրը, երկրներ բոլոր,
ցնծացէք, նուազեցէք եւ երգեցէք.

⁵ երգեցէք Տիրոջը տաւիղով,
տաւիղով ընկերակցէք երգասացութեանը.

⁶ շեփօրի եւ եղջիւրի հնչումով
աղաղակեցէք ձեր Թագաւորի՝ Տիրոջ դիմաց:

⁷ Թող գուարթանայ ծովը եւ ինչ որ պարունակում է,
աշխարհն ու իր բնակիչները.

⁸ Թող ծափահարեն գետերը,
լեռները միասին պարեն.

⁹ Երեսի առաջ Տիրոջ,
որ գալիս է դատելու երկիրը:

Նա դատելու է աշխարհն արդարութեամբ
եւ ժողովուրդներին ըստ իր ուղղամտութեան:



ԱՊՂԱՌՈՒ 99 [98]

Սուրբ Է մեր Տէր Աստուածը

Կցորդ. Երկնի արվայո-թիւնում շէն Կապարում օր ու Գիշեր ասելուց.

Սուրբ, սուրբ, սուրբ է մեր Տէր Աստուածը, Ամենակարողը (Հմմտ. Յյտ 4, 8):

¹ Տէրը թագաւորում է. դողում են ժողովուրդները,
բազմում է քերովբէների վրայ. սասանում է երկիրը,

² մեծ է Տէրը Սիրոնում:

Նա է՝ որ իշխում է ժողովուրդների վրայ.

³ Թող երախտագիտութիւն մատուցեն Քո մեծ եւ ահաւոր Անուանը,
որովհետեւ Նա է Սուրբը:

⁴ Թագաւորի զօրութիւնը արդարութեան սէրն է,
Դու ես՝ որ սահմանել ես իրաւունքը,
Յակոբի մէջ հաստատել ես արդարութիւնն ու դատաստանը:

⁵ Մեծարեցէք մեր Տէր Աստծուն,
երկրպագեցէք Նրա ոտքերի պատուանդանին,
որովհետեւ Նա է Սուրբը:

⁶ Մովսէսը, Ահարոնը Նրա քահանաներից,
Սամուէլը Նրա Անուան միջնորդներից,
կանչում են Տիրոջը, որ պատասխանում է:

⁷ Խօսում է նրանց հետ ամպերի սիւնից,
եւ նրանք պահպանում են Նրա ուսուցումները,
իրենց յանձնուած օրէնքը:

⁸ Մեր Տէր Աստուած, Դու պատասխանում ես նրանց,
Դու նրանց համար մի Աստուած ես, որ ներում է,
բայց ուղղում ես նրանց մեղքերը:

⁹ Մեծարեցէք մեր Տէր Աստծուն,
երկրպագեցէք Նրա Սրբութեան լեռանը,
որովհետեւ Սուրբ է մեր Տէր Աստուածը:



- Կցորդ. Ամեն բան պարկանո՞ւմ է յեզ,
- բայց դու՛րս Քրիստոսինն է՛, իսկ Քրիստոս՝ Աստուծո՛ւնը (1Կր 3, 22-23):
- Կամ. Գո՛ւ՛ է՛ շե՛ղ պարկանո՞ւմ ին՛չնե՛րդ յեզ.
- յիրա՛ն, ի՛սանկ Գն՛ով է՛ Գն՛ու՛ել (Հմմտ. 1Կր 6, 19-20):
- Կամ. Գո՛ւ՛ է՛ այն ժողովո՛ւրդն է՛, որ Աստուծո՛ւնը յեզ է՛բերեց՝
- ա՛նտարանելո՛ւն համար Իր հրաշալի Գործերը (Հմմտ. 1Պտ 2, 9):
- Կամ. Մենք Աստուծո՛ւնը Գործն ենք, Յիսուս Քրիստոսն՝ ամեն պեղծո՞ւած՝
- կարարելո՛ւն համար բարին (Հմմտ. Եփս 2, 10):

¹ **Երախտագիտության մատուցման սաղմոս:**

Աղաղակեցէք զէպի Տէրը, երկրներ բոլոր,

² ծառայեցէք Տիրոջը ուրախութեամբ,
տօնական երգերով մտէք Նրա առաջ:

³ Ճանաչեցէք, որ Տէրն է Աստուած,
Նա է՝ որ ստեղծեց է մեզ եւ ոչ թէ մենք,
մենք իր ժողովուրդն ենք եւ հօտն իր արօտի:

⁴ Նրա դռներից ներս մտէք գովաբանութեամբ,
Նրա յարկից ներս՝ օրհներգութեամբ.
Ղաւանեցէք Նրան, օրհնեցէք Նրա Անունը:

⁵ Այո՛, Տէրը բարի է,
Նրա շնորհը մնում է ընդմիշտ,
Նրա հաւատարմութիւնը՝ սերնդից սերունդ:



- Կցորդ. Այսպիսի Քա՛հանայապետի կարի՛նն ո՛ւնենի՛նք.
- ո՛ւրբ, ան՛ձեղ, ամբի՛ծ (Հմմտ. Եբբ 7, 26):
- Կամ. Սո՛ւրբ չ՛ոգին յեզ էպիսկոպոսներ է կարգել,
- հո՛ւնու՛ելո՛ւն համար Աստուծո՛ւնը Եկեղեցին (Գրծ 20, 28):
- Կամ. Ո՛վ կառավարո՞ւմ է, ի՛բրե՛ս Աստուծո՛ւնը պնդեա՛,
- պէտք է անսպասելի լինի եւ ոչ ինչ հպարտ (Հմմտ. Տտս 1, 7):
- Կամ. Աստուծո՛ւնը ծառան չպէտք է կո՛ւսպան լինի՛,
- այլ լինի՛ր ինչպէս հեղի, եւ ընդո՞ւնակ՝ ո՛ւսուցանելո՛ւն (2Տմ 2, 24):
- Կամ. Աստուծո՛ւնը մարդ, ի՛նչպէ՛ր աշխարհի իրողութեաներից,
- յգտիր ո՛րոյն, համբերո՞ւ՛մեանը, հեղո՞ւ՛մեանը (Հմմտ. 1Տմ 6, 11):
- Կամ. Փնորհի՛ր արդարութեանը, հա՛ւատը, սե՛րը, իսկաղութեանը,
- նրանց հեղ միասին՝ ո՛վէ՛ր կանչո՞ւմ են Տիրոջը մա՛կո՛ւր սրտով (2Տմ 2, 22):

¹ **Գալթի: Սաղմոս:**

Սէրն ու արդարութիւնն եմ երգելու,
տաղեր եմ ասելու Քեզ, Տէր.
² Ընտրելու եմ անմեղութեան ճանապարհը,
ե՞րբ ես դալու իմ մօտ:

Ամբիժ սրտով եմ ընթանալու
իմ տան ներսում.
³ աչքերիս առջեւ չեմ յանդուրժելու
սատանայի գործերը:

Ատելու եմ դաւաճանի վարմունքը,
առանց նրանց հմայուելու.
⁴ Հեռու ինձնից այլասէրուած սիրտը,
չարագործին ճանաչել չեմ ուզում:

⁵ Ով գաղտնի չարախօսում է իր մերձաւորի դէմ,
նրան լռութեան կը վերածեմ.
արհամարհող աչքն ու հպարտ սիրտը
չեմ կամենում յանդուրժել:

⁶ Աչքերս երկրի հաւատացեալների վրայ է,
մօտ եմ մնալու նրանց.
ով ընթանում է ամբոլութեան ճանապարհով,
նա կը լինի իմ ծառան:

⁷ Տանս մտերմութեան շրջանակում չի նստելու նա՝
ով կեղծիքներ է գործում.
ով սուտ է խօսում,
չի կարող դիմանալ աչքերիս առաջ:

⁸ Օր ըստ օր է լռութեան եմ վերածելու
երկրի բոլոր ամբարիշտներին,
Տիրոջ քաղաքից արմատախիլ անելու համար նրան՝
ով գործում է չարիք:



ՍԱՂԱՄՈՒ 102 [101]

Անապատի բուճիկն եմ նմանում

- Կցորդ. Յիսուս Քրիստոս նոյնն է երէկ եւ այսօր, նոյնն է լինելու նաեւ յաւիտեան (Եբր 13, 8):
կամ. Ես եմ Աւրֆան եւ Օմեղան, առաջինը եւ վերջինը, «կեղծ եւ վերջը» (Յյտ 22, 13):
կամ. Երկնն է՞ն ու երկիրը կ'անցնեն, թայց իմ խօսվերը չեն անցնի (Մրկ 13, 31):
կամ. Եթէ մեր երկրային օրէնանը կործանուի,
մի օրէնան կը սրանան Վարժուց (Հմմտ. 2Կր 5, 1):

¹ *Վշտացած հոգու աղօթքը, որ տառապում է եւ Աստույ առաջ ներկայացնում իր ողբը:*

² Տէր, լսիր իմ աղօթքը,
իմ աղաղակը թող հասնի Քեզ.
³ մի՛ թաքցրու ինձնից Քո երեսը,
այն օրը՝ երբ տրտմութեան մէջ եմ.

դէպի ինձ խոնարհեցրու աղանջդ,
երբ կանչում եմ Քեզ, շուտո՛վ, պատասխանիր ինձ:

⁴ Ծուխի նման անհետանում են իմ օրերը,
ոսկորներս այրում են շիկացած ածուխի նման.

⁵ սիրտս չորանում է հնձուած խոտի պէս,
մոռանում եմ ուտել իմ հացը.

⁶ երկարատեւ հեծեծանքներիս պատճառով
մաշկս ոսկորներիս է կպնում:

⁷ Նմանում եմ անապատի բուէճին,
ինչպէս աւերակներում թառած մի բու.

⁸ գիշերը մնում եմ յսկելու,
միայնակ՝ ինչպէս ճնճղուկը տանիքի վրայ:

⁹ Թշնամիներս ամբողջ օրը նախատում են ինձ,
մոլեգնած՝ անիծում են անձս.

¹⁰ մոխիրն է հացը, որ ուտում եմ,
արցունքներ եմ խառնում ըմպելիիս:

¹¹ Զայրոյթիդ ու բարկութեանդ պատճառով,
բարձրացրիր ինձ եւ վար գցեցիր հողին.

¹² օրերս նման են ստուերին, որ թեքում է,
եւ ես թառամում եմ խոտի նման:



¹³ Բայց Դու, Տէր, թագաւորում ես յաւէտ,
յիշատակդ՝ սերնդից սերունդ.

¹⁴ Դու ոտքի կը կանգնես, Սիոնին գթալով,
նրա նկատմամբ ողորմութիւն գործածելու ժամը հասել է.

¹⁵ Քո ծառաների համար թանկագին են նրա քարերը,
նրա փոշու հանդէպ սէր են տածում նրանք:

¹⁶ Հեթանոսները երկնչելու են Տիրոջ Անունից,
Քո փառքից՝ երկրի բոլոր թագաւորները.

¹⁷ երբ Տէրը կը վերականգնի Սիոնը,
երբ այնտեղ կը յայտնուի Իր փառքի մէջ,

¹⁸ կ'ընդունի խոնարհի աղօթքը,
չարհամարհելով նրա աղաչանքը:

¹⁹ Թող սա գրուի գալիք սերունդի համար,
եւ վերստեղծուած ժողովուրդը կը գովի Տիրոջը.

²⁰ «Սրբութեան բարձունքից դիտում է Տէրը,
երկնքից նա նայում է երկրի վրայ.

²¹ լսելու համար բանտարկեալի հեծեծանքը,
ազատելու համար մահուան դատապարտուածներին»:

²² Տիրոջ Անունը մեծարուելու է Սիոնում,
գովաբանուելու է ամբողջ Երուսաղէմով մէկ.

²³ Երբ ի մի են հաւաքուելու ժողովուրդներն ու թագաւորութիւնները,
եւ միասին ծառայելու են Տիրոջը:



²⁴ Ճանապարհի ընթացքում նուազեցրեց իմ ուժը,
համառօտեց թիւն իմ օրերի:

²⁵ Եւ ես աղաղակեցի. «Աստուած իմ,
մի՛ վերցրու ինձ օրերիս կէսին»:

Քո տարիները յաւիտեանս յաւիտենից են,

²⁶ սկզբում հաստատեցիր երկիրը.
Երկիրնքը Քո ձեռքերի գործն է,

²⁷ բայց նրանք կ'անցնեն, Դու կը մնաս.

մաշուում են հիւսուածքի նման,
զգեստների նման Դու կը նորոգես նրանց:

²⁸ Կը նորոգուեն, բայց Դու կը մնաս,
Քո տարիներն անվախճան են.

²⁹ ծառաներդ մի օթեւան կ'ունենան,
նրանց սերունդը կը մնայ Քո ներկայութեան առջեւ:



ԱՊՂԱՌԱ 103 [102]

Ինչպէս գորովագութ է հայրը որդիների հանդէպ

Կցորդ. Արանում բացայայտուեց Աստուծոյ սէրը.

Աստուած աշխարհ առաւելեց Իր մեաթին Որդուն (հմմտ. 1Թվհ 4, 9):

կամ. Մենք չէ՛ որ սիրեցինք Աստուծն, այն Ինքն է՛ որ սիրեց մեզ (1Թվհ 4, 10):

կամ. Իր սիրեցեալ Որդու շնորհիւ

մենք ունենք փրկութիւնը եւ թողութիւնը մեղքերի (հմմտ. Կղս 1, 13-14):

կամ. Իր ողորմութիւնը

սերնդէ սերունդ արածուում է Իրենից երկնշողնների վրայ (հմմտ. Ղկս 1, 50):

կամ. Հիւանդներն է՛ որ Բժշկի կարեւն ունեն.

չէ՛մ եկել կանչելու արդարներին, այլ՝ մեղաւորներին (հմմտ. Մրկ 2, 17):

¹ **Գալթի:**

Հոգի իմ, օրհնիր Տիրոջը,
ներաշխարհ իմ, սրբութեան նրա Անունը.

² Հոգի իմ, օրհնիր Տիրոջը,
մի՛ մոռացիր նրա բոլոր պարգեւները:

³ Նա է, որ ներում է քո յանցանքները,
բժիշկը քո հիւանդութիւնների,

⁴ քո կեանքը գերեզմանից փրկողը,
որ պատում է քեզ սիրով ու քնքշանքով.

⁵ Աստուած բարիքներով յագեցնում է ծերութեանդ օրերը,
գալիք աշխարհում նորոգուելու է քո երիտասարդութիւնը:

⁶ Տէրը գործում է արդարութեամբ,
պաշտպանում է զրկուածները իրաւունքը.
⁷ յայտնում է Մովսէսին իր ճանապարհները,
իր գործերը՝ Իսրայէլի որդիներին:



⁸ Ողորմած է Տէրը եւ կարեկցող,
դանդաղ՝ զայրանալու եւ մեծ՝ սիրոյ մէջ.
⁹ Իր բարկութիւնը չի տեսում ընդմիջտ,
իր ցասումը չի մնում յաւէտ.
¹⁰ մեզ հետ չի վարւում մեր յանցանքների համաձայն,
մեզ չի փոխհատուցում մեր մեղքերի չափով:

¹¹ Որքան երկինքը բարձր է երկրից,
այնքան հզօր է իր սէրը Իրենից երկնչողների վրայ.
¹² որքան հեռու է արեւելքն արեւմուտքից,
այնքան հեռացնում է մեզնից մեր յանցանքները:

¹³ Ինչպէս գորովագութ է հայրը որդիների հանդէպ,
այնպէս Տէրը գորովագութ է Իրենից երկնչողների հանդէպ.
¹⁴ Նա ճանաչում է՝ թէ ինչպիսին է մեր բնազդը,
յիշում է՝ որ մենք հողի փոշի ենք:

¹⁵ Մարդը. նրա օրերը խոտի պէս են,
նա ծլում է դաշտի ծաղկի նման.
¹⁶ փչում է նրա վրայ քամին եւ այլեւս չկայ,
հետքեր չեն մնացել նրա տեղից:



¹⁷ Բայց Տիրոջ սէրը հաւատացեալների վրայ է
յաւիտեանս յաւիտենից,
Նրա արդարութիւնը՝ նրանց որդիների որդիների վրայ.
¹⁸ նրանց վրայ՝ ովքեր պահում են իր ուխտը
եւ յիշում են իր կամքը, այն գործադրելու համար:

¹⁹ Տէրն իր գահն ունի երկնքում,
Նրա թագաւորութիւնն ամբողջ տիեզերքի վրայ է.
²⁰ Նրա հրեշտակներ, օրհնեցէք Տիրոջը,
Նրա խօսքի անյաղթ կատարողներ,
որ ուշադիր էք Նրա խօսքի ձայնին:

²¹ Դուք, Նրա բոլոր զօրքեր, օրհնեցէք Տիրոջը,
դուք, ծառաներ, Նրա կամքը կատարողներ.
²² դուք, Նրա բոլոր գործեր, օրհնեցէք Տիրոջը,
Նրա տէրութեան բոլոր վայրերում:

Հոգի իմ, օրհնիր Տիրոջը:



- Կցորդդ. Որչո՞ւմ մեջոցով են սրբաշնորհ Բողոք Բոյո՞ւնի-նները,
երկնայններն ու երկրայնները (Հմմտ. Կղս 1, 16):
- Կամ. Ասրածոյ Բողոք սրբաշնորհները Բարի են,
եթէ ընդունում են երախտագիտութեան մարտ-ցմամբ (Հմմտ. 1Տմ 4, 4):
- Կամ. Ասրո՞ւս Բողոքին պալիս է կեանքը, շունչը եւ ամէն բան (Հմմտ. Գրծ 17, 25):
- Կամ. Երկնի թռչունները ո՛չ սերմանում են, ո՛չ էլ Ընչո՞ւմ,
Բայց յետ երկնայն չայրը նրանց կերակրո՞ւմ է (Հմմտ. Մտթ 6, 26):
- Կամ. Ասրածոյ անտեսանելի յարկո՞ւնի-նները
կարող են արանո՞ւել Իր Բորածերի մէջ (Հմմտ. Հռմ 1, 20):

¹ Հոգի իմ, օրհնիր Տիրոջը,
քանիցս մեծ ես, Տէր Աստուած իմ.
Գգեստաւորուել ես զեղեցկութեամբ ու մեծվայելչութեամբ,
² փաթաթուել ես լոյսի պատմուճանի մէջ:

Դու տարածում ես երկիրքը վրանի նման,
³ ջրերի վրայ վեր ես խոյացնում օթեւաններդ.
ամպերը Քո համար կառք ես դարձնում
եւ պարում ես քամու թեւերի վրայ.

⁴ քամիները Քո պատգամաբերներն ես դարձնում,
Քո պաշտօնեաները՝ կայծակի բոցերը:

⁵ Հիմքեր տուեցիր երկրին,
որպէսզի յաւիտեան անասան մնայ.

⁶ նրան որպէս հազուստ տուեցիր օվկիանոսը,
նրա ջրերը ծածկում էին լեռները.

⁷ յանդիմանեցիր նրանց, փախան,
դողացին որոտմանդ ձայնից:

⁸ Լեռներից անցնելով, իջան հովիտներին,
դէպի իրենց սահմանուած վայրը.

⁹ անանցանելի սահման դրեցիր նրանց առաջ,
չեն վերադառնայ ծածկելու երկիրը:

¹⁰ Յորդառատ գետեր ես բխեցնում աղբիւրներից,
ընթանում են սարերի միջով.

¹¹ ջուր են տալիս դաշտերի կենդանիներին,
վայրի աւանակները յագեցնում են իրենց ծարաւը.

¹² երկնքի թռչունները սաւառնում են վերեւում,
երգեր են հիւսում տերեւների մէջ:



¹³ Քո օթեւաններից ոռոգում ես լեռները,
յագեցնում ես երկիրը գործերիդ պտղով.

¹⁴ հովիտները բուսականութեամբ ես ծածկում հօտերի համար,
եւ դաշտերը, որոնք մշակում է մարդը:

Երկրից է մարդը հանում իր սնունդը,
¹⁵ գինին, որ ուրախացնում է իր սիրտը,
ձէթը, որ փայլեցնում է իր երեսը,
հացը, որ ուժ է տալիս մարդու սրտին:

¹⁶ Յագենում են Տիրոջ ծառերը,
Լիբանանի մայրիները, որ Նա տնկել է.

¹⁷ նրանց վրայ թռչունները բոյն են դնում,
կիպարիսների վրայ արագիլն ունի իր տունը.

¹⁸ եղջերուներին՝ բարձր լեռները,
նապաստակներին՝ ժայռերի ապաստանները:

¹⁹ Ստեղծեցիր լուսինը՝ տօները ցոյց տալու համար,
եւ արեւը, որ գիտէ իր մայրամուտի ժամը.

²⁰ իջեցնում ես խաւարը եւ գիշեր է,
արթնանում են անտառների կենդանիները.

²¹ դէպի իրենց որսն են մոնչում առիւծի կորիւնները,
Աստուծոյ խնդրում են իրենց կերակուրը:

²² Արեւը ծագելիս քաշում են,
իրենց որջերում բոլորը հանդարտում են.

²³ դուրս է գալիս մարդը աշխատանքի գնալու համար,
իր գործը կատարելու համար մինչեւ երեկոյ:



²⁴ Քանիցս բազմաթիւ են գործերդ, Տէր,
դրանք բոլորն էլ արել ես իմաստութեամբ.
Քո արարածներով լի է երկիրը:

²⁵ Ահա ծովը, ընդարձակ ու խոր,
ուր անթիւ գեռում են կենդանիներ վիթխարի ու փոքրագոյն.

²⁶ վերեւում ընթանում են նաւերը,
Լեւիաթանը, որ ստեղծեցիր, այնտեղ է խաղում:

²⁷ Եւ բոլորը Քեզ են ապաւինում,
որ Դու ժամանակին կերակրես իրենց.

²⁸ Դու պարեւում ես այն, նրանք վերցնում են,
բացում ես ձեռքդ, յագենում են բարիքներով:

²⁹ Թաքցնում ես երեսդ, սարսափում են,
ես ես վերցնում նրանց շունչը, մահանում են
եւ վերադառնում են հողի փոշուն.

³⁰ առաքում ես Հոգիդ, ստեղծում են,
եւ նորոգում ես երկրի երեսը:

³¹ Տիրոջ փառքը թող լինի յաւէտ,
թող Տէրն ուրախ լինի Իր գործերով.

³² Նա դիտում է երկիրը, որն իսկոյն դողում է,
հպւում է լեռներին, որոնք իսկոյն բոցավառում են:

³³ Երգելու եմ Տիրոջը քանի դեռ ապրում եմ,
չարականներ եմ ասելու իմ Աստծուն քանի դեռ գոյութիւն ունեմ:

³⁴ Երգս թող հաճելի լինի Նրան,
որովհետեւ Տիրոջ մէջ է իմ բերկրանքը:

³⁵ Մեղաւորներն անհետանալու են երկրից,
հետք չի մնալու ամբարիշտներից:

Հոգի իմ, օրհնիր Տիրոջը: Ալէլուիա:



ԱՊՂԱՌԱ 105 [104]

Աստուած հաւատարիմ է Իր խօսքին

Կցորդ. Իսկապէս Աստուծոյ Բողոք խոստումները իրականացան
Յիսուս Քրիստոսի մէջ (Հմմտ. 2Կր 1, 20):

Կամ. Ո՛չ թէ Մովսէսը երկնից Բաց Գոտց յեզ,
այլ իմ Հայրն է Գալիս յեզ ճշմարիտ Բացը (Հմմտ. Յվհ 6, 32):

Կամ. Մեր Բայրերը խոստում են մի ժայռից,
եւ այդ ժայռը Քրիստոս Ինչն էր (Հմմտ. 1Կր 10, 4):

Կամ. Աշխարհից եկ՛ միշտ աւելի ամուր Գարննէլէր կոչումը եւ յեր ընդրոթիւնը (2Պտ 1, 10):

¹ Գովեցէք Տիրոջը, կանչեցէք Նրա Անունը,
ժողովուրդների մէջ աւետարանեցէք Նրա գործերը:

² Երգեցէք եւ նուագեցէք Նրա համար,
պատմեցէք Նրա հրաշագործութիւնները:

³ արբեցէք սրբութեան Նրա Անունով,
թող ուրախանայ Տիրոջը փնտռողի սիրտը:

⁴ Փնտռեցէք Տիրոջը եւ Նրա ուժը,
անդադար փնտռեցէք Նրա երեսը:

⁵ յիշեցէք հրաշքները, որ գործեց,
Նրա սքանչելիքներն ու Նրա բերանի վճիռները:

⁶ դուք՝ Աբրահամի՝ Նրա ծառայի սերունդ,
դուք՝ Յակոբի որդիներ, Նրա ընտրեալներդ:

⁷ Այո՛, Տէրը մեր Աստուածն է,
Նրա վճիռներն ամբողջ երկրի վրայ են:

⁸ մշտապէս յիշում է Իր դաշինքը,
հազարաւոր սերունդների համար տրուած խօսքը:

⁹ Աբրահամի հետ կնքուած ուխտը,
Իսահակին վստահեցուած երդումը:

¹⁰ այն որպէս օրէնք հաստատեց Յակոբի համար,
յաւիտենական խոստում՝ Իսրայէլին ի նպաստ:

¹¹ ասելով. «Ձեզ կը տամ Քանանի երկիրը,
կը լինի ժառանգութեան ձեր բաժինը»:



¹² Ահա նրանք. քանակով սակալաթիւ են,
պանդուխտների միայն մի ափ.

¹³ Թափառում են ժողովրդից ժողովուրդ,
մի թագաւորութիւնից ղէպի տարբեր մի ժողովուրդ:

¹⁴ Բայց ոչ ոքի չի թոյլատրում ճնշել նրանց,
նրանց պատճառով՝ պատժում է թագաւորներին.

¹⁵ «Ձեռք մի՛ տուէք նրանց՝ ում օծել եմ,
իմ մարգարէներին չարիք մի՛ արէք»:

¹⁶ Սով է բերում երկրի վրայ,
կտրելով հացի պաշարները.

¹⁷ նրանց առջեւ առաքում է մի մարդ,
Յովսէփին, որպէս ստրուկ ծախուած:

¹⁸ Շղթաներով սեղմում են նրա ոտքերը,
երկաթների մէջ փակում են նրա վիզը.

¹⁹ նա տառապում է Տիրոջ խօսքի համար,
մինչեւ որ կը կատարուի նրա աւետիսը:

²⁰ Եւ թագաւորը հրամայում է ազատել նրան,
ժողովուրդների կառավարիչը նրան արձակում է.

²¹ նրան հաստատում է իր տան տէր,
իր բոլոր բարիքների տնտես.

²² որպէսզի իշխանները ենթակայ լինեն նրան,
որպէսզի իմաստուն դարձնի ծերունիներին:

²³ Եւ Իսրայէլն իջնում է Եգիպտոս,
Յակոբը հաստատում է Քամի երկրում.

²⁴ Տէրը բազմաթիւ է դարձնում իր ժողովուրդը,
առաւել կորովի՝ քանի իր կեղեքիչները.

²⁵ ապա փոխում է սրանց սիրտը,
ատում են իր ժողովուրդին, խաբում են իր ծառաներին:

²⁶ Բայց առաքում է իր ծառայ Մովսէսին
եւ Ահարոնին, որին Նա ընտրել էր.

²⁷ նրանց մէջ դնում է խօսքերն իր նշանների,
իւր հրաշքների, Քամի երկրում:

²⁸ Խաւարն առաքում է եւ ամէն բան խաւարեցնում,
եւ ոչինչ չի դիմադրում իր խօսքին.

²⁹ ջրերն արեան է փոխում
եւ սատկել է տալիս նրանց բոլոր ձկներին:

³⁰ Նրանց երկրում վխտում են գորտերը,
մինչեւ նրանց իշխանաւորների սենեակները.

³¹ Նա խօսում է եւ հասնում են միջատները,
մժեղները, նրանց երկրի բոլոր սահմաններում:

³² Անձրեւի փոխարէն առաքում է կարկուտը,
եւ կայծակներ, որ հրկիզում են արտերը.

³³ Հարուածում է նրանց խաղողներին ու թզենիներին,
տապալում է երկրի ծառերը:

³⁴ Նա խօսում է եւ հասնում են մարախները,
եւ լափող անհամար թրթուռներ:

³⁵ ոչնչացնում են բոլոր բողբոջները
եւ ուտում են երկրի ամէն պտուղները:

³⁶ նրանց երկրում հարուածում է անդրանիկներին,
նրանց կորովի առաջին պտուղներին:



³⁷ Նրանց դուրս է բերում արծաթով ու ոսկիով,
նրանց ազգատոհմերում հիւանդ ոչ ոք չկայ:

³⁸ Եգիպտոսն ուրախանում է նրանց դուրս գալով,
որովհետեւ իրենց վրայ թափուել էր սարսափը:

³⁹ Օրուայ ընթացքում որպէս վրան տարածում է մի ամպ,
կրակով լուսաւորում է գիշերը:

⁴⁰ նրանք աղաղակում են, անձրեւի պէս բերում է լորերին,
նրանց յագեցնում է երկնքի հացով:

⁴¹ բացում է ժայռը եւ բխում են ջրերը,
գետերի նման հոսում են անապատում:

⁴² Մտաբերում է իր սուրբ խոստումը,
որ կատարել էր իր ծառայ Աբրահամին:

⁴³ դուրս է բերում իր ժողովուրդը ցնծութեամբ,
իւր ընտրեալներին՝ ուրախութեան աղաղակների միջով:

⁴⁴ Պարգեւում է նրանց հեթանոսների հողերը,
ժողովուրդների վաստակը՝ որպէս ժառանգութիւն:

⁴⁵ որպէսզի կատարեն իր կամքը
եւ պահեն իր պատուիրանները:

Ալէլուիա:



ԱՂՂՈՒ 106 [105]

Մեղանչեցինք մեր հայրերի հետ

Կցորդ. Այս Թաները կարարութիւն որպէս օրինակ մեր Համար ,
որպէսզի շար Թաներ չցանկանանք (1 Կր 10, 6):

Կամ. Իսրայէլացիներն անհման Հեթեանեւո՞ւ՝
փրկութիւնը Հասելէ Հեթանոսներին (Հմմտ. Հում 11, 11):

Կամ. Ո՞վ կարժո՞ւմ է՝ թէ որչի՞ վրայ կանգո՞ւն է, թող զԹոյշ լինի շքնկնէլո՞ւ (1 Կր 10, 12):

Կամ. Ես պարժո՞ւմ եմ սրբազրո՞ւմ եմ նրանց՝ ում սիրո՞ւմ եմ.
Եւանդոսն եղիւր, ուրեմն, եւ դարձի եւ (Յյտ 3, 19):

¹ Ալէլուիա:

Երախտագիտութիւն մատուցէք Տիրոջը, Նա բարի է,
յաւիտենական է Իր սէրը.

² ո՞վ կարող է պատմել Տիրոջ հրաշքները,
հնչեցնել Նրան վայել բոլոր գովասանքները:

³ Երանի նրան՝ ով վարւում է արդարութեամբ,
եւ գործադրում է իրաւունքն ամէն ժամանակ.

⁴ յիշիր ինձ, Տէր,
յանուն այն սիրոյ, որ տածում ես ժողովուրդիդ հանդէպ:

Այցելիր ինձ եւ բեր ինձ փրկութիւնը,

⁵ թող որ ես տեսնեմ ընտրեալներիդ բարիքը.
Թող որ ես ցնծամ ժողովուրդիդ ցնծութեամբ,
պարծենամ Քո ժառանգութեամբ:

⁶ Մեր հայրերի հետ մենք մեղանչեցինք,
չեղուեցին եւ ուրացանք.

⁷ նրանց հետ, երբ Եգիպտոսում էին
եւ չէին հասկանում Քո սքանչելիքները.
չէին յիշում Քո սիրոյ առատութիւնը,
ապստամբելով Կարմիր Ծովի մօտ:



⁸ Փրկեց նրանց յանուն Իր սիրոյ,
նրանց համար բացայայտեց Իր ուժը.

⁹ սպառնաց Կարմիր Ծովին եւ չորացրեց այն,
ցամաքի վրայով առաջնորդելու համար նրանց ալիքների միջով.

¹⁰ հարստահարողի ձեռքից փրկեց նրանց,
ազատագրելով նրանց թշնամու ձեռքից:

¹¹ Ջրերը ծածկեցին նրանց կեղեքողներին,
նրանցից ոչ մէկը չփրկուեց.

¹² յայնժամ հաւատացին Նրա խօսքին,
հնչեցնելով գովքի մի երգ:

¹³ Բայց ահա՝ որ նրանք մոռանում են Նրա գործերը,
Նրա ծրագրի հանդէպ յոյսի մէջ թերանում են.

¹⁴ անապատում այրւում են ցանկութիւններով,
միայնութեան մէջ փորձում են Աստծուն.

¹⁵ Նա կատարում է նրանց պահանջները
եւ յագեցնում է նրանց որկրամոլութիւնը:

¹⁶ Բանակատեղում նախանձում են Մովսէսին
եւ Ահարոնին՝ Տիրոջ սրբին.

¹⁷ բացւում է հողը եւ կլանում Դաթանին,
ծածկում է Աբիրոնի խմբին.

¹⁸ կրակը լափում է այն խմբին,
հուրը սպառում է այն ապստամբներին:

¹⁹ Քորբեի վրայ պատրաստում են մի հորթ,
երկրպագում են երկաթէ առարկայի.

²⁰ Գործանակելով Նրան՝ ով իրենց փառքն է,
խոտ ուտող եզան պատկերի հետ:

²¹ Մոռանում են իրենց փրկող Աստծուն,
որ հեղինակն է Եգիպտոսում կատարուած հրաշքների,

²² Քամի երկրում կատարուած սքանչելիքների,
Կարմիր ծովի մօտ եղած զարմանալի գործերի:

²³ Յայնժամ որոշում է ոչնչացնել նրանց,
բայց ոտքի է կանգնում Մովսէսն՝ Իր ընտրեալը,
որ Նրա առջեւ շարունակելով ոտքի կանգնած մնալ՝
Նրա զայրոյթին արգելում է բնաջնջել նրանց:

²⁴ Մերժում են վայելքների երկիրը,
չեն հաւատում Աստծոյ խօսքին.

²⁵ շարունակում են տրտնջալ իրենց վրաններում,
չեն ունկնդրում Տիրոջ ձայնը:

²⁶ Նա Իր ձեռքը բարձրացնում է նրանց դէմ,
երդուելով կորստեան մատնել նրանց անապատում.

²⁷ Հեթանոսների մէջ վռնդել նրանց սերունդը,
ցիրուցան անելով նրանց ամբողջ երկրով մէկ:

²⁸ Զուգաւորում են Փէոր կուռքի հետ,
մասնակցում են մեռածների զոհասեղաններին.

²⁹ բարկացնում են Նրան իրենց վարուելակերպով,
մինչեւ որ մահաբեր հիւանդութիւնը բռնկուում է նրանց մէջ:

³⁰ Բայց Փենէէսը ոտքի է ելնում արդարութիւն անելու
եւ յայնժամ հիւանդութիւնը դադարում է.

³¹ նրան դա համարում է արդարութիւն
սերնդից սերունդ յաւիտեան:

³² Բարկացնում են Նրան Մերիբայի ջրերի մօտ,
նրանց յանցանքով՝ պատժում է Մովսէսը.

³³ իր հոգու խորքում նրանցից դառնացած՝
առանց խորհելու բացում է բերանը:

³⁴ Հրաժարում են հեթանոսներին բնաջնջելուց,
ինչպէս հրամայել էր Տէրը.

³⁵ խառնում են կռապաշտների մէջ
եւ սովորում են գործել նրանց պէս:

³⁶ Մառայութեան են նուիրում նրանց կուռքերին,
որոնք որոգայթ են դառնում նրանց համար.

³⁷ որպէս զոհ են յանձնում սեփական որդիներին
եւ սեփական դուստրերին մատուցում են դեւերին:

³⁸ Հասնում են հեղելու անմեղ արիւնը,
արիւնը որդիների ու դուստրերի.
նրանց զոհում են Քանանի կուռքերին,
եւ երկիրը պղծում է արեամբ.

³⁹ *այս արարքներով դառնում են անսուրբ,
պոռնկանում են իրենց վարմունքի մէջ:*



⁴⁰ *Տէրը զայրոյթից այրւում է իր ժողովուրդի դէմ,
զգւում է իր ժառանգութիւնից:*

⁴¹ *յանձնում է նրանց հեթանոսների ձեռքը,
նրանց թշնամիները դառնում են նրանց տէրերը:*

⁴² *նրանց հակառակորդները դառնում են նրանց բռնակալները,
նրանց ճգմում են իրենց ձեռքի ներքոյ:*

⁴³ *Բազում անգամներ ազատեց նրանց,
բայց նրանք յամառում են ապստամբութեան մէջ,
ընկղմւում են իրենց մեղքի մէջ:*

⁴⁴ *Բայց Նա հայում է նրանց կեղեքմանը,
երբ իրեն հասնում է նրանց աղաղակը:*

⁴⁵ *յիշում է նրանց հետ կնքուած ուխտը,
իւր անսպառելի սիրոյ մէջ՝ նրանց մխիթարում է:*

⁴⁶ *պարգեւում է նրանց կարեկցանք գտնել
նրանց մօտ՝ ովքեր իրենց գերի են պահում:*

⁴⁷ *Փրկիր մեզ, Տէր, Աստուած մեր,
ի մի ժողովիր մեզ բոլոր հեթանոսների միջից:
երախտագիտութիւն կը մատուցենք սրբութեան Քո Անուանը,
Քեզ գովել կարողանալով կը պարծենանք:*

⁴⁸ *Օրհնեալ է Տէրը, Աստուածն Իսրայէլի,
ի յաւիտենից եւ ի յաւիտեանս յաւիտենից:
Ամբողջ ժողովուրդը թող ասի. Ամէն:*

Ալէլուիա:



Վերջ Սաղմոսների Չորրորդ Գրքի



ՍԱՂՄՈՍ 107 [106]

Տիրոջ կողմից փրկուածները

*Կցորդ. Մենէլ Գեդեմէլ, որ ամէն թան նպաստում է թարեի՛ն նրանց՝
«Վէ՛ր սիրո՞ւմ են Աստուծո՞ւն (Հոմ 8, 28):*

կամ. Երանի յեւ, որ այժմ վաղցած է՛, որովհետեւ դո՛ւ յագեանալո՛ւ է՛ (ՂԿՍ 6, 21):

կամ. Երանի յեւ, որ այժմ արտասու՞մ է՛, որովհետեւ դո՛ւ ո՛րախանալո՛ւ է՛ (ՂԿՍ 6, 21):

կամ. Միշտ աղօթեցէ՛, ամէն ինչի համար շնորհակալ եղէ՛:

«Ա՛լ Աստուծոյ կամե՛լը յեր համար ի Յիսուս Քրիստոս (1ԹՍ 5, 17-18):

կամ. Տէրը կ'ապագի ինչ ամէն շարեի՛ց

եւ կը փրկի ինչ Իր երկնային արեւոյտ-թեան համար (2ՏՄ 4, 18):

կամ. Յիսուս անցաւ Բարեգործելու վե- Բժշկելու վ,
որովհետեւ Լսարանաթ Իր Հետք էր (Հմմտ. Գրծ 10, 38):

¹ Երախտագիտութիւն մատուցէք Տիրոջը, Նա բարի է,
յաւիտենական է Իր սէրը.

² սա թող ասեն Տիրոջ կողմից փրկուածները,
հարստահարողի ձեռքից ազատագրուածները,

³ բոլոր երկրներէից ի մի ժողովուածները,
հիւսիսից եւ ծովից, արեւելքից եւ արեւմուտքից:

⁴ Ոմանք թափառում էին անապատում, անջրդի ճանապարհներում,
առանց բնակութեան յարմար քաղաք գտնելու.

⁵ քաղցած եւ ծարաւից մահամերձ,
նրանց կեանքը նուազում էր իրենց մէջ:

⁶ Նեղութեան մէջ աղաղակում են Տիրոջը,
նրանց ազատում է իրենց վշտերից.

⁷ նրանց առաջնորդում է ապահով ճանապարհի վրայ,
դէպի մի քաղաք, ուր կարող են բնակուել:

⁸ Թող երախտագիտութիւն մատուցեն Տիրոջը Իր սիրոյ համար,
մարդու հանդէպ գործուած հրաշքների համար.

⁹ որովհետեւ Նա յագեցնում է ծարաւածներին
եւ բարիքներով լիացնում է քաղցածներին:



¹⁰ Ուրիշներ բնակում էին մահուան խաւարի մէջ,
թշուառութեան ու շղթաների մէջ բանտարկուած.

¹¹ քանի որ ապստամբ էին Աստուծոյ խօսքի դէմ,
արհամարհում էին Բարձրեալի ծրագիրը.

¹² իրենց սրտի մէջ չարչարանքից ուժասպառ,
ընկնում էին եւ օգնող ոչ ոք չկար:

¹³ Նեղութեան մէջ աղաղակում են Տիրոջը,
նրանց ազատում է իրենց վշտերից.

¹⁴ նրանց հանում է մահուան խաւարի միջից,
գետին է գցում նրանց շղթաները:

¹⁵ Թող երախտագիտութիւն մատուցեն Տիրոջը Իր սիրոյ համար,
մարդու հանդէպ գործուած հրաշքների համար.

¹⁶ որովհետեւ կոտորում է պղնձէ դռները,
փշրում է երկաթէ փականքները:

¹⁷ Ուրիշներ ճգմուած էին յանցանքների ներքոյ,
տառապում էին իրենց մեղքերի համար.

¹⁸ մերժում էին ամէն տեսակ կերակուր,
հասել էին մահուան սեմին:

¹⁹ Նեղութեան մէջ աղաղակում են Տիրոջը,
նրանց ազատում է իրենց վշտերից.

²⁰ Նա առաքում է իր խօսքը եւ բժշկում նրանց,
նրանց կեանքերն ազատում է գերեզմանից:

²¹ Թող երախտագիտութիւն մատուցեն Տիրոջը իր սիրոյ համար,
մարդու հանդէպ գործուած հրաշքների համար.

²² Եւ թող մատուցեն գովաբանութեան զոհեր,
ցնծութեամբ թող պատմեն Նրա գործերը:

²³ Ուրիշներ նաւերի վրայ ահօսում էին ծովը,
օվկիանոսը, իրենց աշխատանքը կատարելու համար.

²⁴ վկաներ՝ Տիրոջ գործերի,
Նրա հրաշքների՝ խոր անդունդի վրայ:

²⁵ Նա խօսում էր եւ յարուցում փոթորիկ,
մի քամի, որ բարձրացնում էր կոհակները.

²⁶ բարձրանում էին երկիրնք եւ ապա իջնում անդունդ,
նրանց կեանքը վրդովուած էր փոթորկից.

²⁷ ալեկոծւում էին, տատանւում արբածների նման,
ոչնչի չէր ծառայում նրանց վարպետութիւնը:

²⁸ Նեղութեան մէջ աղաղակում են Տիրոջը,
նրանց ազատում է իրենց վշտերից.

²⁹ փոթորիկը լռութեան է վերածում,
վերստին հանդարտութիւն է տալիս ծովի ալիքներին.

³⁰ ուրախանում են՝ դրանք խաղաղ տեսնելով,
նրանց առաջնորդում է ղէպի փափաքուած նաւահանգիստը:

³¹ Թող երախտագիտութիւն մատուցեն Տիրոջը իր սիրոյ համար,
մարդու հանդէպ գործուած հրաշքների համար.

³² Թող մեծարեն Նրան ժողովուրդի հաւաքում,
թող գովեն Նրան տարեցների ժողովում:



³³ Նա գետերը անապատի է փոխում,
ջրերի աղբիւրները՝ պապակած հողի.

³⁴ արգաւանդ երկիրը՝ աղային տարածքի,
եթէ բնակիչները այլասերուած են դառնում:

³⁵ Բայց նա անապատը վերածում է լճի,
չորացած հողերը՝ ջրերի օազիսների.

³⁶ այնտեղ բնակուելու է առաջնորդում քաղցածներին,
որպէսզի մի հիւրընկալ քաղաք կառուցեն:

³⁷ Սերմանում են դաշտեր եւ տնկում են խաղողի այգիներ,
եւ ապա հաւաքում են դրանց պտուղները.

³⁸ օրհնում է նրանց եւ աճում են բազմաթիւ,
եւ բարգաւաճում են նրանց երամակները.

³⁹ նոյնիսկ երբ սակաւաթիւ են եւ քչացած՝
ամլութեան, յոգնութեան եւ արհաւիրքների պատճառով:

⁴⁰ Այլ Նա արհամարհանքը թափում է հզօրների վրայ,
անելանելի քառսի մէջ մոլորեցնում է նրանց.

⁴¹ Նա թշուառութիւնից կրկին ոտքի է կանգնեցնում աղքատին,
հօտի նման բազմապատկում է նրա սերունդը:

⁴² Արդարները տեսնում են եւ ուրախանում,
անարդարութեան բերանը պապանձւում է.

⁴³ Իմաստունը պահպանում է այս բաները,
նրանց մէջ յստակ տեսնում է Տիրոջ սէրը:



ԱՊՂԱՌՈՒ 108 [107]

Երկնքից աւելի մեծ է Քո սէրը

Կցորդ. Փրկո՞ւնիւն, փառ՞ էւ զօրո՞ւնիւն մեր Աստուծոն.

արեար էւ Տշմարիտ էն Իր Կապառապանները (Հմմտ. Յյտ 19, 1-2):

Կամ. Հարկա՞որ է՝ որ Քրիստոս թագա՞որի,

մինչէ՞ որ թուր թշնամներին կը պնէ Իր ոտներին ներքոյ (Հմմտ. 1Կր 15, 25):

Կամ. Պո՞ւն, եղբայրներ, խա՞արի մեջ չե՞նք.

լոյսի որդիներ ե՞նք եւ ցերեկո՞ւայ որդիներ (Հմմտ. 1Թս 5, 4-5):

Կամ. Արդ ժամանակն է յեզնից արթնանալո՞ւ,

որովհետե՞ւ այժմ մեր փրկո՞ւնիւն առաւել մօտ է (Հռմ 13, 11):

¹ **Երգ: Սաղմոս: Դաւթի:**

² Իմ սիրտը հաստատուն է, ո՛վ Աստուած,
եւ ուզում եմ երգել եւ սաղմոս ասել.

³ արթնացէք, տաւիղ ու քնար,
արթնացնելու եմ արշալոյսը:

⁴ Ժողովուրդների առաջ

երախտագիտութիւն եմ յայտնում Քեզ, Տէր,
ազգերի առաջ երգում եմ Քեզ.

⁵ Քո սէրը երկնքից աւելի մեծ է,
Քո ճշմարտութիւնը՝ ամպերից աւելի վեր:

⁶ Երկնքից աւելի վեր բարձրացիր, Աստուած,
եւ թող Քո փառքը լցնի երկիրը.

⁷ որպէսզի փրկուեն Քո ընտրեալները,
փրկիր Քո աջով եւ պատասխանիր:

⁸ Աստուած խօսեց Իր Սրբավայրում.

«Ես ցնծում եմ եւ բաժանում եմ Սիւքէմը,
կտոր կտոր եմ անում Սուքքոթի հովիտը:

⁹ Իմն է Գաղաադը եւ Իմն է Մանասէն,

Եփրեմն Իմ գլխի սաղաւարտն է,
Յուդան՝ հրամանատարութեանս գաւազանը:

¹⁰ Մոզաբն այն աւագանն է, որում լուացւում եմ,
Եղոմի վրայ նետում եմ հողաթափս,
յաղթանակ եմ ազազակում փղշտացիների վրայ»:

¹¹ Ո՞վ կ'առաջնորդի ինձ ամբացուած քաղաքից ներս,
ո՞վ կը տանի ինձ Եղոմ:

¹² Եթէ ոչ՝ Դու, ո՞վ Աստուած, որ այժմ մերժում ես մեզ
եւ այլեւս դուրս չես գալիս մեր զօրքերի հետ:

¹³ Նեղութեան մէջ օգնութեան հասիր մեզ, Աստուած,
մարդը փրկութիւն չի կարող տալ:

¹⁴ Աստծոյ հետ՝ մեծ գործեր կը կատարենք,
միայն Նա կը ջախջախի մեր թշնամիներին:



ԱՊՂԱՌՈՒ 109 [108]

Նրանք անիծում են, բայց Դու օրհնում ես

Կցորդ. Գո՞ւ՛ն է ինձ ներքէջ յարասրան մե՛ք արե՛վ,

այլ թողէ՛ք՝ որ Գործի ասորո՛ւածային թարկո՛ւնիւնը (Հմմտ. Հում 12, 19):

Կամ. Օրհնեցէ՛ք նրանց՝ ո՛վ էր Ըստ թո՛ւմ էն յեւ, օրհնեցէ՛ք ե՛ւ մե՛ք նո՛ւ վե՛լ (Հում 12, 14):

Կամ. Մե՛ք թող՝ որ շարը յաղթի՛ ձեւ, այլ թարի՛ ո՛վ յաղթի՛ր շարին (Հում 12, 21):

Կամ. Սիրեցէ՛ք յեր թշնամիներին, թարի՛ք արե՛վ յեւ արողներին (Ղկս 6, 27):

Կամ. Օրհնեցէ՛ք նրանց՝ ո՛վ էր անթո՛ւմ էն յեւ,
աղօթեցէ՛ք նրանց Ըստ ար՝ ո՛վ էր յեւ շար շարո՛ւմ էն (Ղկս 6, 28):

¹ **Երգչախմբի դեկավարի համար: Գալթի: Սաղմոս:**

Գոզաբանութիւններիս Աստուած, լուռ մի՛ մնա,

² իմ դէմ բացուել է չարագործի բերանը.

նենգաւոր բերանը իմ մասին ստեր է ասում,

³ շրջապատում են ինձ ատելութեան խօսքերով,
առանց պատճառի պատերազմում են իմ դէմ:

⁴ Սէրս փոխհատուցում են մեղադրանքներով,
մինչ ես կանգնած եմ աղօթքի:

⁵ Բարիքի փոխարէն ինձ հատուցում են չարիք,
եւ ատելութիւն՝ իմ սիրոյ փոխարէն:



⁶ «Թող մի ամբարիշտ նշանակուի նրա դէմ,
նրա աջ կողմում թող կանգնի ամբաստանողը.

⁷ դատարանից թող յանցապարտ դուրս գայ,
նրա աղօթքը թող վերածուի մեղքի:

⁸ Թող կարճացուեն նրա կեանքի օրերը,
մէկ ուրիշը թող վերցնի նրա պաշտօնը.

⁹Նրա որդիները որբեր դառնան,
նրա կիներ թող դառնայ այրի:

¹⁰Նրա որդիները մուրալով թափառեն,
դուրս վռնդուեն իրենց աւերուած տներից.

¹¹Վաշխառուն լափի նրա բոլոր ունեցուածքները,
օտարներն յափշտակեն նրա տիրոյթը:

¹²Ոչ ոք թող նրա համար ողորմութիւն չխնդրի,
ոչ ոք չողորմի նրա որբերին.

¹³Թող զրկուած լինի սերունդից,
նրա անունը թող անհետանայ գալիք սերնդի միջից:

¹⁴Նրա հայրերի յանցանքները թող յիշուեն Տիրոջ առաջ,
թող չջնջուի նրա մօր մեղքը.

¹⁵Թող միշտ Տիրոջ առաջ լինեն,
նրա յիշատակը թող ջնջուի երկրից»:



¹⁶Ահա այսպէս մերժում է ողորմութիւն անել,
հալածելով խեղճին ու աղքատին,
սպանելով խոնարհուած սիրտ ունեցողներին.

¹⁷Սիրեց նզովքը, թող ընկնի իր վրայ,
ատեց օրհնութիւնը, թող նրանից հեռանայ:

¹⁸Անէծքը, որ հագնում էր որպէս պատմուճան,
թող ջրի նման թափանցի նրա որովայնից ներս,
թող իւղի նման ներծծուի ոսկորները մէջ:

¹⁹Թող նրա համար լինի որպէս զգեստ, որ պատում է նրան,
գօտի, որ սեղմում է նրան ընդմիշտ.

²⁰որովհետեւ Տէրն այսպէս է վարձատրում զրպարտողներին,
նրան՝ ով չարիք է խօսել իմ դէմ:

²¹Իսկ Դու, Տէր, Աստուած իմ,
միջամտիր Քո Անուան պատճառով,
հաւատարիմ սիրոյդ համաձայն՝ օգնիր ինձ:

²²Ես խեղճ եմ ու աղքատ,
սիրտս խոցուած է ինձնում.

²³Քայլում եմ ինչպէս խոնարհւող ստուերը,
ինչպէս մորեխը, որ ոտքի տակ ճղմուում է:

²⁴Ծնկներս նուաղել են պահքից,
մարմինս նիհարել է եւ ուժասպառ եղել.

²⁵Նրանց համար դարձել եմ նախատինք,
ով ինձ տեսնում է՝ թափահարում է գլուխը:

²⁶Օգնիր ինձ, Տէր, Աստուած իմ,
փրկիր ինձ յանուն Քո սիրոյ շնորհի.

²⁷ Թող ճանաչեն՝ որ ձեռքդ գործում է,
որ Դու, Տէր, միջամտում ես:

²⁸ Նրանք անիծում են, բայց Դու օրհնում ես,
բարձրանում են, բայց խոնարհեցւում,
ծառադ ուրախութիւնից ցնծում է:

²⁹ մեղադրողներս ծածկուած են ամօթով,
պատուած են անարգութեան պատմուճանի մէջ:

³⁰ Լիաձայն երախտագիտութիւն եմ մատուցում Տիրոջը,
ամբոխների մէջ մեծարում եմ նրան:

³¹ որովհետեւ կանգնած է աղքատի աջին,
փրկելու համար նրանցից՝ ովքեր դատապարտում են նրան:

